Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի
նախագահի թեկնածու

ԱՐԱ ԶՈՀՐԱԲՅԱՆԻ

ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ
(2017-2021)

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի
նախագահի ընտրություն՝
2017թ. սեպտեմբերի 9

ՄԵՐ ՈՒԺԸ ՄԻԱՍՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ Է

Հարգելի՛ փաստաբան,

Հայաստանի փաստաբանների պալատի նախագահի ընտրություններին կրկին առաջադրվելու որոշումը կայացրել եմ նախորդ 4 տարվա անցած ուղին, ձեռքբերումներն ու բացթողումները վերլուծելուց և փաստաբան գործընկերներիս հետ խորհրդակցելուց հետո:

2013-2017թթ. իմ նախընտրական ծրագիրը, որը ժամանակին խոստումների գրքույկ էր թվում, հնարավորություն եմ ունեցել բարի ցանկություններից վերածել գործնական իրականության միայն փաստաբանների պալատի աշխատակազմի, փաստաբանական համայնքի մեծամասնության աջակցության և մեր բոլորի համառ աշխատանքի ու ջանքերի շնորհիվ: Շնորհակալություն եմ հայտնում յուրաքանչյուրիդ՝ այս ճանապարհը միասին անցնելու, արտաքին ճնշումներին համարժեք պատասխանելու և ՀՀ փաստաբանների պալատը փաստաբաններին հարազատ ու մասնագիտական վայր դարձնելու համար: Գնահատել և ընդունել եմ մեր մասնագիտական համայնքն ավելի լավը դարձնելու խորհուրդները, առողջ քննադատությունները և առաջարկությունները: Որպես կենդանի և զարգացող օրգանիզմ՝ ՀՀ փաստաբանների պալատը ուշադրության կենտրոնում էր, և հաճախ այդ ուշադրության հիմքում կառույցը ցնցումների ենթարկելու, դրականը մերժելու, մեզ պառակտելու ներքին և արտաքին դրսևորումներն էին, որոնք այդպես էլ չեն հաջողվել՝ կոփելով մեր կամքը և ավելացնելով մեր կուտակած փորձը: Ձեր ընտրությունը կարևոր է ՀՀ փաստաբանների պալատի հետագա զարգացման, առկա ավանդույթների պահպանման, փաստաբանների շահերի պաշտպանության և մեր պետության մեջ փաստաբանի դերն արժևորելու համար:

Հարգանքով՝

փաստաբան Արա Զոհրաբյան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Կենսագրական տվյալներ 3
Փաստաբանների պալատի գործունեության հիմնական խնդիրները 7
Փաստաբանների պալատի ձեռքբերումները 8
2017 – 2021 թվականների նախընտրական ծրագրի հիմնական ուղղությունները 27
Հանրային պաշտպանության ինստիտուտի զարգացում 27
Փաստաբանական գրասենյակների զարգացում և փաստաբանների կողմից ժամանակակից տեխնոլոգիաների կիրառում 29
Փաստաբանների իրավունքների պաշտպանություն 30
Ուսուցում և փաստաբանների վերապատրաստում 31
Վարքագծի կանոնագրքի դրույթների 32
կիրարկման ապահովում 32
Պալատի կառավարման և գործունեության թափանցիկություն 33
Պալատի ինստիտուցիոնալ հզորացում 34
Այլ ծրագրերի իրականացում 35

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ

Ծննդյան տարեթիվը և վայրը

- 12 ապրիլ 1978թ. ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն

Կրթություն

- 1994-1999թթ. Երևանի Գլաձոր համալսարան իրավաբանական ֆակուլտետ
- դիպլոմավորված մասնագետ

Գիտական կոչում

- Իրավաբանական գիտությունների թեկնածու, ԺԲ.00.04, 2013թ., Երևանի պետական համալսարանի մասնագիտական խորհուրդ
- Թեման՝ «Ապացուցման միջոցների հիմնահարցերը Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարությունում»

Աշխատանքային և մասնագիտական գործունեություն

- 2016թ-ից Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի Իրավագիտության 063 մասնագիտական խորհրդի անդամ
- 2013թ-ից ՀՀ փաստաբանների պալատի նախագահ
- 2013թ-ից ՀՀ փաստաբանական դպրոցի կառավարման խորհրդի նախագահ
- 2012թ-ից ՀՀ փաստաբանական դպրոցի դասախոս
- 2012-2013թթ.՝ ՀՀ փաստաբանների պալատի և ՀՀ ոստիկանության միջև 08.02.2012թ. համագործակցության հուշագրի շրջանակներում ստեղծված հանձնախմբի անդամ, ՀՀ փաստաբանների պալատի համակարգող

- 2011-2013թթ.՝ Եվրոպայի խորհրդի «Արևելյան գործընկերության երկրներում իրավական բարեփոխումների աջակցություն» ծրագրի փորձագետ
- 2010-2013թթ.՝ ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի առընթեր գիտավերլուծական կենտրոնի համակարգող
- 2009թ-ից՝ «Ձոհրաբյան և գործընկերներ» փաստաբանական գրասենյակ (**այսուհետ՝ Փաստաբանական գրասենյակ**) ՍՊԸ նախագահ
- 2009թ-ից՝ Երևանի Գլաձոր համալսարանի դասախոս
- 2007-2013թթ.՝ ՀՀ փաստաբանների պալատի նախագահի տեղակալ
- 2007-2013թթ.՝ ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի անդամ
- 2006-2010թթ.՝ «Լոնդոն- Երևան Կօ» ապահովագրական ՍՊԸ խորհրդի անդամ
- 2005-2011թթ.՝ Երևանի «Մանց» համալսարանի դասախոս
- 2002-2009 թթ.՝ Փաստաբանական գրասենյակի գլխավոր տնօրեն
- 2001թ-ից՝ փաստաբանական գործունեության արտոնագիր
- 2000-2002թթ.՝ Փաստաբանական գրասենյակի իրավաբան
- 1999-2000թթ.՝ «Երևանի հաստոցաշինական արտադրական միավորում» ԲԲԸ իրավաբան

Համակարգած կամ վարած ծրագրերը և դասընթացները

- 2012-2017թթ. վերապատրաստման դասընթացներ ՀՀ փաստաբանների պալատում՝ «Ապացույցները և ապացուցման գործընթացը քաղաքացիական դատավարությունում» թեմայով
- 2012-2017թթ. դասախոսություն ՀՀ փաստաբանական

դպրոցում՝ «Ապացույցները և ապացուցման գործընթացը քաղաքացիական դատավարությունում» և «Հայցադիմումի և պատասխանի կազմման գործնական առաջարկություններ» թեմաներով

- 2012թ. ապրիլ՝ «Վճռաբեկ բողոքները վարույթ ընդունելու հարցը քննարկելիս արձանագրություն չվարելու մասին» թեմայով դատավորների հետ սեմինար-քննարկում
- 2012թ. մայիս՝ «Քաղաքացիական գործերը դատաքննության նախապատրաստելու ինստիտուտի կապակցությամբ ձևավորված դատական պրակտիկայի վերաբերյալ» թեմայով դատավորների հետ սեմինար-քննարկում
- 2012թ. դեկտեմբեր՝ «Երրորդ կողմի մասնակցությունը ներպետական և միջազգային դատավարություններում. Հայաստանում amicus curiae ներկայացնելու մշակույթը և զարգացումները» թեմայով սեմինար
- 2012թ. ապրիլ-սեպտեմբեր՝ «ՀՀ սահմանադրական դատարան և Մարդու իրավունքների եվրոպական դատարան երրորդ կողմի կարծիք (amicus curiae) ներկայացնելուն նպաստելու մասին» ծրագիր
- 2009-2017թթ. դասախոսություն Երևան Գլաձոր համալսարանում (բակալավրիատ և մագիստրատուրա)՝ «Քաղաքացիական դատավարություն» թեմայով
- 2007թ. ՀՀ փաստաբանների պալատի և Ամերիկյան իրավաբանների ընկերակցության հայաստանյան ներկայացուցչության (ABA/CEELI) կազմակերպմամբ փաստաբանների համար անցկացվող «Վեճերի այլընտրանքային լուծումը» թեմայով սեմինար

- 2006-2008թ. ՀՀ կենտրոնական բանկի իրավաբանական վարչության աշխատակիցների համար «Քաղաքացիական դատավարության իրավունք» ուսումնական դասընթաց

Մասնագիտական կոչումներ

- 2015թ. Փարիզի փաստաբանների պալատի պատվավոր անդամի կոչում
- 2015թ. Մոնպելիեի փաստաբանների պալատի պատվավոր անդամի կոչում

Զինվորական ծառայություն

- 1996-1998թթ. ծառայել է հայոց բանակում

Ընտանեկան դրություն

- Ամուսնացած է, ունի երեք որդի

ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

2013-2017թթ. ՀՀ փաստաբանների պալատի (այսուհետ նաև՝ Պալատ) գործունեության ընթացքում արձանագրվել են հետևյալ հիմնական ներքին և արտաքին խնդիրները՝

Ներքին խնդիրներն են.

- Հանրային պաշտպանի գրասենյակի ծանրաբեռնվածությունը.
- Փաստաբանական գրասենյակների դանդաղ զարգացումը.
- Փաստաբանների աշխատանքում ժամանակակից տեխնոլոգիաների կիրառման մշակույթի բացակայությունը.
- Փաստաբանների միասնականությունը պառակտելուն ուղղված փոքրաթիվ փաստաբանների միտումները:

Արտաքին խնդիրներն են.

- Պետության ձգտումը՝ վերահսկելու փաստաբանների մասնագիտական պրակտիկան.
- Արդարադատության իրականացման և դատական անկախության ապահովման գործընթացում առաջացող բարդությունները, որոնք խոչընդոտում են փաստաբաններին՝ պատշաճ իրականացնելու իրենց մասնագիտական պարտականությունները.
- Որոշ պետական մարմինների կողմից փաստաբանների՝ իրավաբանական օգնություն տրամադրելու համար անհրաժեշտ տեղեկատվություն ստանալու դիմումների մերժումները.
- Փաստաբանական գրասենյակների կողմից քաղաքացիներին անվճար իրավաբանական օգնությանը վերաբերող ծառայությունների հարկումը պետության կողմից:

ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐԸ

2013-2017թթ. Փաստաբանների պալատի հիմնական ձեռքբերումներն են.

- ***Փաստաբանների պալատի նյութատեխնիկական միջոցների ընդլայնում՝***
  - Փաստաբանների պալատի շենքի ձեռք բերում ՀՀ կառավարությունից (անհատույց օգտագործման իրավունքով), ինչպես նաև առանձին տարածքների վերանորոգում բարերարների միջոցներով.
  - Երեք տրանսպորտային միջոցի ձեռք բերում.
  - Նկուղային հարկում պահեստի և արխիվի տարածքների ձեռք բերում՝ նվիրատվության միջոցով:

Փաստաբանների պալատի աշխատակազմի կառավարման արդյունավետության բարձրացում՝

- Փաստաբանների պալատի ֆինանսական գործառնությունների կառավարման համակարգի ներդնում.
- Եռամսյակային և տարեկան կտրվածքով ֆինանսական հաշվետվությունների տրամադրում փաստաբաններին.
- Աշխատակազմի գործառույթների ոլորտային բաշխում.
- Էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգի (Mulberry) ներդնում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ ՈԼՈՐՏԱՅԻՆ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄ



ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՆԱՄԻԿԱՆ

Համեմատական ժամանակահատված	2012թ.	2013թ.	2014թ.	2015թ.	2016թ.	2017թ.
Աշխատողների փաստացի քանակ (առանց ՀՊԳ)	23	21	24	24	22	23

Հանրային պաշտպանի գրասենյակի զարգացում՝

- Հանրային պաշտպանների թվաքանակի ավելացում.
- Մրցույթով հանրային պաշտպանների ներգրավման համակարգի ներդնում.
- Հանրային պաշտպանների աշխատանքի արդյունավետության գնահատման համակարգի ներդնում.
- Էլեկտրոնային հանրային պաշտպան համակարգի ներդնում.
- ՀՊԳ վերահսկողության մոնիթորինգի համակարգի ներդնում:






Ուսուցում և փաստաբանների վերապատրաստում՝

- Փաստաբանական դպրոցի ընդունելության քննությունների ընթացակարգի համակարգային փոփոխություն՝ թափանցիկության պահանջների խստացում և ըստ մասնագիտական ուղղվածության քննության մրցույթի կազմակերպում.

- Փաստաբանական դպրոցում ընթացիկ քննությունների համակարգի ներդնում.
- Փաստաբանական դպրոցում ուսուցման հեռավար հարթակի ներդնում.
- Փաստաբանական դպրոցի կայքի ստեղծում.
- Անվճար իրավաբանական օգնության ծրագրերին փաստաբանական դպրոցի ունկնդիրներին ներգրավում.

- Որակավորման քննությունների ընթացակարգի համակարգային փոփոխություն՝ հավակնորդների անձի բացահայտման բացառում, քննությունների խնդիրների օբյեկտիվ ընտրություն.
- Փաստաբանների վերապատրաստման դասընթացների

կազմակերպման փոփոխություն՝ թեմաների վերաբերյալ կարծիքների հավաքագրում, թեմաների նախապես հրապարակում, փաստաբանների գրանցում, փաստաբանների համար հարմարավետ պայմանների ստեղծում.

- Դասընթացավարների ընտրության կարգի սահմանում.
- Դասընթացավարների, թեմաների և այլ հարցերի վերաբերյալ հարցաթերթիկներով կարծիքների հավաքագրում, վերլուծում.
- Վերապատրաստման հեռավար և առցանց համակարգերի ներդնում.
- Մարզերի փաստաբանների համար տեղում առանձին դասընթացների կազմակերպում.
- Արտոնագրերի հանձնման նոր արարողակարգի սահմանում:

Փաստաբանների պալատի մարզային քաղաքականությունը՝

- Մարզային համակարգողների և քաղաքի պատասխանատուների համակարգի ներդնում՝ մարզում մարզային համակարգողի ընտրություն կամ մարզի քաղաքում քաղաքի պատասխանատուի ընտրություն.
- Որոշ մարզերի (քաղաքների) համար անդամավճարի արտոնությունների սահմանում.
- Մարզերում գրասենյակների բացում (ընդլայնում).
- Մարզերում անվճար իրավաբանական օգնության ծրագրերի իրականացում.
- Հյուսիսային ներկայացուցչության (Լոռի, Շիրակ, Տավուշ մարզեր) ստեղծում:

Այլ պետության փաստաբանական կառույցների հետ համագործակցություն՝

- Համագործակցության հուշագրերի կնքում Փարիզի փաստաբանների միության, Մարսելի փաստաբանների միության, Վրաստանի փաստաբանների միության, Բելառուսի փաստաբանների միության, Ղազախստանի փաստաբանների միության, Ռուսաստանի Դաշնության փաստաբանների պալատի, Ղրղզստանի փաստաբանների միության, Տաջիկստանի փաստաբանների միության, ՈՒզբեկստանի փաստաբանների միության, Չեխիայի փաստաբանների պալատի հետ.

- «Մեկ ճանապարհ, մեկ գոտի» համագործակցության շրջանակում հռչակագրի ստորագրում Ֆրանսիայի իրավաբանների ազգային խորհրդի, Գերմանիայի դաշնային փաստաբանների միության, Հնդկաստանի ազգային փաստաբանների միության, Ավստրալիայի իրավական խորհրդի, Վիկտորիայի իրավական ինստիտուտի, Անգլիայի և Ուելսի իրավական համայնքի, Հարավային Աֆրիկայի իրավական համայնքի, Լիտվայի փաստաբանների միության, Լյուքսեմբուրգի իրավաբանների միության, Մալազիայի իրավաբանների միության, Մոնղոլիայի իրավաբանների միության, Մյանմարի իրավաբանների միության, Նեպալի իրավաբանների միության, Օսակայի իրավաբանների միության, Սինգապուրի իրավական համայնքի, Չինաստանի բոլոր իրավաբանների միության, և այլ կառույցների հետ.
- Մարդկության Իրավունքների վերաբերյալ Հռչակագրի ստորագրում Ֆրանսիայի փաստաբանական համայնքների ազգային խորհրդի, Համբուրգի, Մալիի, Լուքսեմբուրգի, Ալժիրի, Լիբանանի, Բուրկինա Ֆասոյի, Իտալիայի, Բելգիայի, Թունիսի, Կիպրոսի, Սոֆիայի, Շվեյցարիայի և Սենեգալի փաստաբանական միությունների հետ.
- Արտերկրում փաստաբանների շարունակական մասնագիտական վերապատրաստման փոխադարձ ճանաչման մասին հուշագրի ստորագրում Հյուսիսային Իռլանդիայի իրավական համայնքի, Շվեդիայի փաստաբանների միության, Իսպանիայի Բիլբոյի փաստաբանների միության, Լեհաստանի փաստաբանների միության, Շոտլանդիայի իրավական համայնքի, Բոսնիա և Հերցոգովինայի փաստաբանների դաշնային միության հետ.
- Ակտիվ համագործակցություն Մոնպելիեի փաստաբանների

միության, Գերմանիայի Դաշնության փաստաբանների միության, Եվրոպայի փաստաբանների միությունների և իրավական համայնքների խորհրդի (CCBE) հետ.

- Փարիզում «ԿԱՌՊԱ-ների Միջազգային Միություն» կազմակերպության հիմնադրում՝ Ֆրանսիայի ԿԱՌՊԱ-ների ազգային միության, Բուռկինա Ֆասոյի, Կոտ Դիվուարի, Մադագասկարի և Մարոկկոյի փաստաբանների միությունների հետ միասին.
- Անդամակցություն Փարիզում գրանցված Փաստաբանների միջազգային միությանը (UIA):

- ***Ներպետական կառույցների հետ համագործակցություն.***
  - Համագործակցության հուշագրերի ստորագրում՝ ՀՀ արդարադատության նախարարության, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի, ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի, ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի, «Երկրապահ կամավորական միություն» ՀԿ-ի հետ, հետևյալ հիմնական ուղղություններով՝
    - Արդարադատության նախարարության իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ Պալատի կարծիքի ձևավորման, նախարարության գործունեության ոլորտում փաստաբանների մասնագիտական պարտականությունների կատարման հետ կապված խնդիրների դեպքում, դրանց քննարկման և լուծման նպատակով.
    - ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի հետ համատեղ հանձնախմբի ստեղծում՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակիցների կողմից մաքսային և հարկային ոլորտներում վարչարարություն կամ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված

դատավարական գործողություններ իրականացնելու ժամանակ փաստաբանների մասնագիտական պարտականությունների կատարման առնչությամբ որևէ խնդիր ծագելու դեպքում, այդ խնդրի անհապաղ քննարկման և լուծման նպատակով.

- Օրենքների սահմանադրականության հարցով Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարան դիմելու հնարավորությամբ ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի հետ համագործակցություն.
- Փաստաբանների նախաձեռնությամբ փորձաքննությունների իրականացման հնարավորություն:





Փաստաբանների իրավունքների պաշտպանություն.

- Փաստաբանների իրավունքների պաշտպանության հանձնաժողովի ստեղծում.
- Արագ արձագանքման հանձնախմբի ստեղծում.
- Փաստաբանների իրավունքների խախտման վերաբերյալ հանձնաժողովի հայտարարությունների հրապարակում.
- Տարեկան հաշվետվությունում փաստաբանների իրավունքների խախտումներին վերաբերող արձանագրված դեպքերի արտացոլում և հրապարակում:

Փաստաբանների աջակցության ծրագրերի իրականացում

- Փաստաբանների պալատի Երիտասարդական խորհրդի ստեղծում.
- Անդամավճարների արտոնությունների սահմանում՝ մայր փաստաբանների, տարեց փաստաբանների, Երևանից 120կմ գերազանցող բնակավայրում գործող փաստաբանների համար.
- 210 փաստաբանի համար մեկ տարվա անդամավճարների վճարում բարերարի կողմից.
- 20 երիտասարդ փաստաբանի համար աշխատասենյակի հիմնում՝ վեց ամիս ժամկետով (մինչև փաստաբանական դպրոցի հաջորդ շրջանավարտների ներգրավելը) անվճար աշխատելու համար:

- ***Անվճար իրավաբանական օգնության ծրագրերի իրականացում***
  - Երևան քաղաքում յուրաքանչյուր հինգշաբթի օրը ՀՀ փաստաբանների պալատում քաղաքացիներին անվճար իրավաբանական օգնության տրամադրում.
  - ՀՀ փաստաբանական դպրոցի պրակտիկայում գտնվող ունկնդիրներին անվճար իրավաբանական օգնության տրամադրման ծրագրին ներգրավում.
  - Արարատի և Շիրակի մարզերում փաստաբանների կողմից պարբերաբար անվճար իրավաբանական օգնության տրամադրում.
  - Սիրիահայերին անվճար իրավաբանական օգնության տրամադրում.

- Փաստաբանների և փաստաբանական դպրոցի ունկնդիրների կողմից տարբեր մարզերում, քրեակատարողական հիմնարկներում անվճար իրավաբանական խորհրդատվության տրամադրում:

Այլ ծրագրերի (միջոցառումների) իրականացում

- Սիրիահայերի օժանդակության փաստաբանական ծրագրի իրականացում, այդ թվում՝ իրավական հարցերի և պատասխանների ձեռնարկի ստեղծում և տարածում.

- Երեխաների պաշտպանության միջազգային օրվա կապակցությամբ յուրաքանչյուր տարի փաստաբանների երեխաների համար միջոցառումների կազմակերպում, այդ

թվում՝ փաստաբանի գործունեության բնույթի մասին և մարդու իրավունքներին վերաբերող թեմաներով իրազեկում.

- «Իրազեկ բանակ» փաստաբանական ծրագրի իրականացում, այդ թվում՝ զորամասերում և զինվորական վարժարանում դասընթացների կազմակերպում.
- «Իրազեկ Դպրոց» փաստաբանական ծրագրի իրականացում, այդ թվում՝ դպրոցականներին փաստաբանների պալատի և փաստաբանի աշխատանքներին ծանոթացում, նրանց իրավունքների պարզաբանում.

- Յուրաքանչյուր տարի մայիսի 9-ին Հայրենական մեծ պատերազմի մասնակից վետերան փաստաբանների մեծարման միջոցառման կազմակերպում.

- Յուրաքանչյուր տարի փաստաբանների համար ամանորյա միջոցառման կազմակերպում.

- Քանդակագործ Ղուկաս Չուբարյանի (Չուբարի) հեղինակած Մխիթար Գոշի դիմաքանդակի ձեռք բերում նվիրատվությամբ՝ բարերարների միջոցով:





Փաստաբանների վարքագծի կանոնագրքի կիրարկումը

- Փաստաբանների պալատի խորհրդի կարգապահական գործերով որոշումների հրապարակում.
- Փաստաբանների պալատի խորհրդի կարգապահական

գործերով նիստերի հեռարձակում.

- Դեոնթոլոգիայի թեմաներով վերապատրաստման դասընթացների իրականացում.
- Ակումբի նիստերին Վարքագծի կանոնագրքի կիրարկման հարցերով քննարկումների կազմակերպում.
- Փաստաբանների պալատի կայքում կարգապահական գործերով խորհրդի որոշումների որոնման համակարգի ստեղծում:

Հանրային կապերի ամրապնդում.

- Փաստաբանների պալատի աշխատակազմում մամուլի խոսնակի հաստիքի ստեղծում.
- Ժամանակակից պահանջներին համապատասխանող Փաստաբանների պալատի կայքի ստեղծում, որն ունի անդամավճարների չափի մասին տեղեկանալու, վերապատրաստման դասընթացների ժամերի մասին տեղեկանալու, անդամավճարն առցանց վճարելու, խորհրդի նիստերն առցանց դիտելու, ընթերակաների բազան լրացնելու և օգտվելու գործիքներ.

Վերապատրաստման ժամեր		
Պարտադիր անհրաժեշտ է լրացնել	Լրացրել է	Մնացել է
12	4	8

- Փաստաբանների ներգրավումը տարբեր հեռուստատեսային հաղորդումներին.
- Փաստաբանների գործերի լուսաբանումներ տարբեր լրատվամիջոցներով:

Փաստաբանությունը վկանգող գործընթացների կանխում

- ՀՀ արդարադատության նախարարության կողմից փաստաբանների ռեեստրը պետական մարմնի կողմից վարելու և փաստաբանների համար պետական տուրք սահմանելու օրինագծի դեմ պատշաճ հակազդեցություն (քննարկումներ, հանդիպումներ, ասուլիսներ, ստորագրահավաքի կազմակերպում).
- Փաստաբանների՝ քաղաքացիական գործերով ներկայացուցչությունը, որպես մենաշնորհ սահմանող նորմերի սահմանադրականության հարցով պատշաճ հակազդեցություն (իրավական դիրքորոշումների, այլ պետության փորձի և վերլուծության ներկայացում).
- ՀՀ ազգային ժողովում փաստաբանների՝ քաղաքացիական գործերով ներկայացուցչությունը, որպես մենաշնորհ սահմանող նորմերի փոփոխության օրինագծի ընդունման դեմ պատշաճ հակազդեցություն (իրավական դիրքորոշումների, այլ պետության փորձի և վերլուծության ներկայացում, ԱԺ հանձնաժողովի նիստում մասնակցություն):

2017 – 2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Սույն նախընտրական ծրագրում ներառված են Փաստաբանների պալատի գործունեության ներքին և արտաքին խնդիրների, ինչպես նաև Փաստաբանների պալատի առջև օրենքով դրված մշտական խնդիրների լուծմանն ուղղված միջոցառումները:

ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

- **Հանրային պաշտպանության ինստիտուտի հետագա զարգացման և բարեփոխումների իրականացման ապահովում՝**
  - Հանրային պաշտպանի գրասենյակի (այսուհետ՝ ՀՊԳ) հանրային պաշտպանների թվաքանակի ավելացում կամ ՀՊԳ ծանրաբեռնվածության բեռնաթափման այլ ծրագրերի իրականացում.
  - Իրավաբանական օգնության դիմելու և տրամադրելու, ծառայությունների որակի նկատմամբ վերահսկողության հետ կապված սահմանված ընթացակարգերի արդյունավետ կիրառում.

- **ՀՊԳ հեղինակության բարձրացում՝**
  - Հանրային բնույթի միջոցառումների շարունակական անցկացում.
  - Միջազգային կառույցների հետ հարաբերությունների հաստատում և դրամաշնորհային ծրագրերի ներգրավում և իրականացում.

- ՀՊԳ աշխատակիցների և պաշտպանների կողմից հոդվածների և այլ նյութերի մշակում և հրապարակում.
- Հանրությանն անվճար իրավաբանական օգնության տրամադրման վերաբերյալ իրազեկում:

- **ՀՊԳ պաշտպանների մասնագիտական որակների բարձրացում և շարունակական վերապատրաստման ապահովում՝**
  - ՀՊԳ պաշտպանների համար պարտադիր վերապատրաստման դասընթացների կազմակերպում՝ ըստ մասնագիտացման և առավել հաճախ հանդիպող իրավական հարցերի.
  - Օտարերկրյա և/կամ միջազգային կազմակերպությունների հետ համատեղ վերապատրաստման դասընթացների անցկացում:

- **Իրավաբանական օգնության այլընտրանքային և ՀՊԳ գործունեությանն օժանդակող համակարգերի մշակում՝**
  - Բացի հանրային պաշտպաններից, անվճար իրավաբանական ծառայություններ մատուցելու պատրաստակամություն ունեցող մշտապես գործող փաստաբանների ցանցի ստեղծում.
  - Անվճար իրավաբանական օգնություն տրամադրող փաստաբանական գրասենյակների տվյալների հրապարակում փաստաբանների պալատի կայքում:

- **ՀՊԳ աշխատանքների իրականացման թափանցիկության և հաշվետվողականության բարձրացում՝**
  - ՀՊԳ կողմից հաշվետվությունների շարունակական հրապարակում Պալատի կայքում.
  - ՀՊԳ գործունեության մոնիթորինգի իրականացում.
  - ՀՊԳ հաջողված պատմությունների, ռազմավարական

դատավարությունների, վիճակագրության և այլ նյութերի հրապարակում Պալատի կայքում:

ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ ԵՎ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄ

- **Փաստաբանական գրասենյակների ներկայացուցիչների ակումբի ստեղծում՝**
  - Պարբերական քննարկումների կազմակերպում փաստաբանական գրասենյակների ներկայացուցիչների հետ.
  - Այլ պետության փաստաբանական գրասենյակների ցանցերում ընդգրկվելու նպատակով ՀՀ փաստաբանական գրասենյակներին անհրաժեշտ օժանդակության ապահովում.
  - Փաստաբանական գրասենյակների զարգացման համար անհրաժեշտ միջոցառումների կազմակերպում, այդ թվում՝ անհրաժեշտ օրենսդրական նախագծերի մշակում.
  - Այլ պետության փաստաբանական գրասենյակների կառավարման հարցով փորձի փոխանակում.
  - Փաստաբանական գրասենյակի կառավարման թեմայով վերապատրաստման դասընթացների շարունակական կազմակերպում:

- **Փաստաբանական գործունեություն իրականացնելիս ժամանակակից տեխնոլոգիաների կիրառում՝**
  - Զարգացած պետություններում փաստաբանական

գործունեություն իրականացնելիս կիրառվող ժամանակակից տեխնոլոգիաների ուսումնասիրություն և առաջարկությունների փաթեթի կազմում.

- Փաստաբանական գործունեության իրականացումը կարգավորող համակարգչային ծրագրի մշակում և տրամադրում փաստաբաններին.
- Ժամանակակից տեխնոլոգիաների կիրառման վերաբերյալ ուսուցողական դասընթացների կազմակերպում:

- **Փաստաբանական գրասենյակների էքսպո-ցուցահանդեսի կազմակերպում:**

ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

- **Փաստաբանների իրավունքների պաշտպանությանն ուղղված միջոցառումներ՝**
  - Փաստաբանների իրավունքների իրականացման խոչընդոտների վերաբերյալ տեղեկատվության հրապարակում, տարածում և քննարկումների կազմակերպում.
  - Փաստաբանների իրավունքների պաշտպանության հանձնաժողովի և արագ արձագանքման հանձնախմբի աշխատանքների լուսաբանում.
  - Ակումբի նիստերում փաստաբանների իրավունքների խախտման դեպքերի քննարկում և միջոցառումների իրականացում:

- **Փաստաբանական գործունեությանն առնչվող օրենքների փոփոխությունների վերաբերյալ դիրքորոշումների ներկայացում**

իրավասու մարմիններին:

- **Պետական մարմինների կողմից փաստաբանների մասնագիտական պրակտիկան վերահսկելու ցանկացած փորձի արձանագրում, վերլուծում և համարժեք պաշտպանության միջոցների կիրառում:**

- **Փաստաբանների միասնականությունը պառակտելուն ուղղված փոքրաթիվ փաստաբանների նախաձեռնությունների պատճառների վերհանում և փաստաբանների միասնականությունն ամրապնդող միջոցառումների իրականացում:**

- **Փաստաբանի մասնագիտական պարտականությունների կատարման խոչընդոտների վերացում՝**
  - Խոչընդոտների արձանագրում և վերացման համար անհրաժեշտ առաջարկությունների ներկայացում.
  - Փաստաբանների՝ իրավաբանական օգնության համար անհրաժեշտ տեղեկատվություն ստանալու դիմումների մերժումների վերլուծում և անհիմն մերժումների վերաբերյալ պաշտոնական արձագանքում.
  - Խոչընդոտների վերացման նպատակով ռազմավարական դատավարությունների կազմակերպում.
  - Օրենսդրական նախագծերի մշակում:

ՈՒՍՈՒՑՈՒՄ ԵՎ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

- **Փաստաբանական դպրոցի կարողությունների հզորացում**
  - Ընդունելության քննությունների պահանջների խստացում.

- Հակակոռուպցիոն քարոզի շարունակական իրականացում ունկնդիրների շրջանակում.
- Օտարերկրյա փաստաբանական դպրոցների հետ փորձի փոխանակման իրականացում.
- Առցանց վերապատրաստման դասընթացների կազմակերպում փաստաբանների համար:

- **Փաստաբանների վերապատրաստման համակարգի շարունակական զարգացում՝**
  - Օտարերկրյա փորձի ուսումնասիրում և տեղայնացում.
  - Փաստաբանների վերապատրաստման ծրագրերի պարբերական արդիականացում.
  - Վերապատրաստման գործընթացում փաստաբանների կարիքների բացահայտում և վերապատրաստման արդյունավետության գնահատում.
  - ՀՀ մարզերում փաստաբանների վերապատրաստման կարիքների գնահատում և տեղում վերապատրաստման դասընթացների կազմակերպում.
  - Վերապատրաստման դասընթացների առցանց և հեռավար համակարգերի զարգացում:

ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՆՈՆԱԳՐՔԻ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ԿԻՐԱՐԿՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ

- **Մասնագիտական էթիկայի չափորոշիչների համապատասխանեցում միջազգային չափորոշիչներին՝**
  - Զարգացած երկրների փաստաբանական էթիկայի

կանոնների ուսումնասիրում և տեղայնացում.

- Փաստաբանի վարքագծի հարցերի վերաբերյալ այլ պետության կամ պետությունների փաստաբանական կառույցների կամ մասնագիտացված կազմակերպությունների հետ հանդիպման կամ հեռավար կարգով համաժողովի կազմակերպում.
- Նոր վարքագծի կանոնագրքի (կամ փոփոխությունների, լրացումների) նախագիծ կազմող աշխատանքային խմբի ստեղծում:

- **Փաստաբանի վարքագծի կանխատեսելիությանն ուղղված միջոցառումների իրականացում՝**
  - Պալատի խորհրդի կարգապահական գործերով որոշումների շարունակական հրապարակում Պալատի կայքում.
  - Պալատի խորհրդի կարգապահական գործերով որոշումների ժողովածուի ստեղծում և խորհրդատվական պարզաբանումների հրապարակում:

ՊԱԼԱՏԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅՈՒՆ

- **Պալատի խորհրդի նիստերին առցանց հետևելու համակարգի շարունակական կիրառում:**
- **Եռամսյակային և տարեկան կտրվածքով Պալատի կայքում ֆինանսական հոսքերի՝ մուտքերի և ծախսերի մասին տեղեկատվության շարունակական հրապարակում:**
- **Պալատի պաշտոնների անվանացանկի հրապարակում:**
- **Պալատի խոշոր (1 մլն. ՀՀ դրամը գերազանցող)**

գործարքների վերաբերյալ խորհրդի որոշումների հրապարակում (ընդունելի ձևաչափով*):

* եթե առկա կլինեն բանկային, առևտրային կամ այլ գաղտնիք պարունակող տեղեկություններ, ապա կհրապարակվի միայն խորհրդի որոշման եզրափակիչ մասը:

ՊԱԼԱՏԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԶՈՐԱՑՈՒՄ

- **Պալատի տարածաշրջանային ներկայացուցչության կամ համակարգողների ինստիտուտի շարունակական հզորացում:**

- **Հասարակության հետ կապերի ընդլայնում՝**
  - Տարածքային ներկայացուցչության կամ համակարգողների միջոցով քաղաքացիների շրջանում իրազեկվածության բարձրացում.
  - Pro bono ծրագրի կամ այլ ծրագրերի շրջանակներում փաստաբանների այցերի կազմակերպում մարզեր և քաղաքներ՝ քաղաքացիներին հուզող հարցերի պարզաբանման համար.
  - Փաստաբանների կամ փաստաբանական գրասենյակների մասնակցությամբ հեռուստահաղորդումների կամ ինտերնետային հաղորդումների կազմակերպում.
  - Հանրությանն առավել հետաքրքրող թեմաների շուրջ հոդվածների հրապարակում.
  - Պալատում և մարզային տարածքներում բաց դռների օրվա անցկացում:

- **Պալատի կայքի կամ սոցիալական ցանցի միջոցով քննարկումների (ֆորումների) կազմակերպում:**

- **Հասարակության հետ կապերի ռազմավարության մշակում՝**
  - Արտաքին աշխարհի և շահագրգիռ կողմերի հետ ունեցած Պալատի կապերի ընդլայնում և քննարկումների հաճախականության ավելացում.
  - Զանգվածային լրատվամիջոցների հետ կապերի շարունակական ամրապնդում.
  - Պալատի կայքի շարունակական զարգացում:

ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- **Հարկման ռեժիմի բարելավման միջոցառումների կազմակերպում Pro bono ծրագրի իրականացման համար՝**
  - Հարկերից ազատում Pro bono ծրագրի շրջանակում անվճար իրավաբանական օգնություն տրամադրելու դեպքերում.
  - Օրենսդրական փոփոխությունների լոբբինգի իրականացում:

- **Շարունակական բնույթ կրող հասարակական ծրագրերի և նախաձեռնությունների իրականացում՝**
  - «Իրազեկ բանակ» փաստաբանական ծրագիր.
  - «Իրազեկ դպրոց» ծրագիր.
  - Իրավագիտության ֆակուլտետների ուսանողների ընդունելություն.
  - Փաստաբանների պալատում արդեն իսկ ավանդական դարձած նախաձեռնությունների և միջոցառումների իրականացում:

- **Անդամավճարների չափի ավելացման բացառմանն ուղղված քաղաքականություն:**

ԱՐԱ ԶՈՀՐԱԲՅԱՆ
Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի
նախագահի թեկնածու

Մեր ուժը միասնության մեջ է

ք. Երևան, Արշակունյաց 17

(+37491) 000117, (+37410) 440333

ara@lawgroup.am

www.zohrabyan.am